ըլլալ։ Պարտէզին մէջ եւ բարձրաւանդակին վրայ Թագուհին մէկ քանի անգամ կը լուսանկարէ Իշխանուհիները առանձինն, եւ ապա հետեւորդաց եւ վարդապետներուն հետ։ Ժամ մը եւ քառորդ մը սահած էին. կ'իջնեն բարձրաւանդակէն եւ կ'ուղղուին դէպ ի կամրջակ. հոն Գերյ. Աբբահայրը կը յայտնէ Ն. Վեհափառութեան Միաբանութեան խորին շնորհակալիքը այդ բարեացակամ եւ թանկագին այցելութեան համար եւ իր մեծարանքը կը մատուցանէ վարդապետներուն հետ, մինչ Թագուհին եւ Իշխանազունք կը մտնեն շոգեմակոյկ, ուսկից վերջին անգամ մ'ալ կը լուսանկարէ քահանայից խումբը, եւ շոգեմակոյկը կը սկսի հեռանալ։

Այս այցելութիւնն եւ Միաբանութեան կողմէ կատարուած հիւրամեծարութիւնը, ինչպէս կ'երեւի, մեծ գոհունակութիւն եւ հաճոյք պատճառած են Նորին Վեհափառութեան. իրաւամբ իր մեկնումէն մէկ քանի օր վերջ Ս. Ղազար կը հասնի հետեւեալ հեռագիրը։

Գերյարգոյ Մեծաւոր Հայ Վարդապետներուն — Ս. Ղազար կղզի — Վենետիկ։

Ն. Վեհափառութիւնը կը պարտաւորէ զիս վերստին հաղորդել Ձեզ եւ Յարգոյ Հայրերուն իր երախտապարտ հոգւոյն արտայայտութիւնը այդքան շահագրգռող այցելութեան համար, ինչպէս նաեւ Ձեր բոլոր փութկոտ հոգածութեանց. Օգոստափառ Թագուհին կը պահէ ամենահաճելի յիշատակ մը։

Արքունի Հոգաբարձու Ալպերդոյ տի Սէյսէլ Տէ։

## ՊԱՏԱՍԽԱՆՍ
## ԱՌ Հ. ԱԿԻՆԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

*Պիտի յիշեն «ԲԱԶՄԱՎԷՊ»ի ընթերցողք, որ տարիներ առաջ[1] այս էջերուն վրայ լոյս տեսան Մայրավանքիս դիւանական թուղթերու շարքին մէջ՝ յատկապէս Վիեննական Վեր. Հայրերը շահագրգռող երեք ուշագրաւ վաւերագրեր։ Այդ առթիւ էր որ քննութեան ենթարկած էի երեք կարեւոր կէտեր, որոնք երեւցած էին բաւական տարիներ առաջ «ՅՈՒՇԱՐՁԱՆ»ի[2] մէկ էջին վրայ։ Հարցը ինքնին լուծուած էր՝ կարգ մը փաստացի վկայութիւններու, վաւերական տուեալներու վրայ, և ի յայտ եկած էր սքողուած ճշմարտութիւնը՝ ի նպաստ Ս. Ղազարու Մխիթարեան Ուխտին։*

*Այժմ «ՀԱՆԴ. ԱՄՍՕՐԵԱՅ»ի մէջ[3] Հայ բանասիրութեան ծանօթ Մեծ. Հ. Ներսէս Վ. Ակինեան «Մի էջ Մխիթարեան Պատմութենէն» տիտղոսով հրապարակ կ'իջնէ բացատրելու կամ արդարացնելու այդ իր նախկին գրութիւնը[4], «յեցած» — ինչպէս կ'ըսէ — իր Միաբանութեան «հին աւանդութիւններու և» իրեն (Հ. Ակինեանի) «մատչելի դիւանական թղթերու վրայ» (Հանդ. Ամս. էջ 521)։*

*Յայտնի է թէ Մեծ. Հ. Ակինեան՝ իբր նախկին խմբագրապետ Հանդէսի, և իբր հեղինակ իր «Ակնարկ»ին՝ հարկ էր որ անգամ մը ևս պրպտէր իբրև յայտնի բանաւէր՝ այդ «մատչելի դիւանները» կամ հարցափորձէր իր նախնեաց աւանդութիւնը, մեր վաւերագրերուն ամբողջ ճշմարտութիւններուն պատասխանելու համար։*

*«Ակնարկ»ի այդ էջը՝ կրկնե՛նք. ա. կը նկատէր Մելքոնեան Աբբահօր ընտրու-*

1. Բազմ. 1926, Մայիս, էջ 158-160. Յունիս 190-192. Յուլիս 221-223։
2. 1911. Վիեննա, Մխիթարեան Տպարան,
3. Օգոստոս–Սեպտեմբեր, 1929, էջ 520-533։
4. «Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան Հարիւրամեայ գործունէութեան վրայ», 1811–1911»։

digitised by A.R.A.R.@

*թիւնը 1750 Ապրիլ 6-էն մինչև 1772 Մայիս 25 տակաւին չհաստատուած Հռովմէն. — բ. կ'անդրադարձնէր՝ թէ ըստ յիշողութեան նոյն ժամանակի իրենց երիցագոյններէ ոմանց՝ Մխիթարայ մտքին մէջ եղած ըլլայ ի Թրիեստ վանատուն մը բանալու ծրագիրը. — գ. իրենց կը սեփականէր Մխիթարեան յորջորջումի առաջնութիւն մը։*

*Հերքելու համար նախ Լուսահոգի Մելքոնեան Աբբահօր դէմ արձակուած այդ ծանր անիրաւութիւնը՝ բաւական համարած էի զետեղել մի միայն 9 ապացոյցներ*[1]*, բայց Հ. Ակինեան Վ. մէկ հարուածով՝ այսօր «յոյժ տկար» և «անզօր» դատեր է 1-8 ապացոյցներս, տեսնելով հանդերձ՝ որ գրեթէ ամէնքը իրենց հաստատութիւնն ունին առանձին պաշտօնագրերով ու թուականներով, զորս դրկած են Ս. Ժողովի երկու նախագահներ՝ Ծիրանաւորք Քարաֆա և Վալէնդին, նոյն Ժողովի Քարտուղարը Մոնս. Լերգար, վենետկոյ Քահանայապետական Դեսպան Արք. Մարինուս Յիննիքուս, ևն։ Մեծարգոյ Հայրը չէ անդրադարձած, որ սոյն կարգով վարժեցնել ու պատրաստել կ'ուզէր զինքը, լսելու համար զօրաւորագոյնը՝ թիւ 9-ը, որ և ստուգիւ իրեն առջև ալ «հզօր ապացոյց կ'երևայ»։ Յամենայն դէպս 1-9 ապացոյցներուս մասին Հ. Ակինեան Վ.ի կողմանէ սոյն դիտողութիւնները երբ իմացայ՝ ես ալ իմ կարգին յիշեցի Նիկեղոնի սա խօսքը, թէ «Ես փաստերը չեմ համրեր, այլ կը կշռեմ»։ Այնու հանդերձ բանասէր Հայրը դարձեալ առանց վերապահութեան կը ծանուցանէ, թէ չ'ուզեր «ի մասին ընտրութեան Մելքոնեան Աբբահօր յետս կոչել» իր յայտարարութիւնը, մինչև որ – կ'ըսէ – չհրատարակուին «պատմական հաստատագրիս պատճէնը և անոր վերաբերեալ ժողովոյն գործերը»* (էջ 522) *դիւանական թղթերու շարքին մէջ։ Նաև փափագ կը յայտնէ, որ հրատարակուէին* 1750-1774 *և գլխաւորապէս* 1773 *և* 1774 *տարիներու «Միաբանութեան ներքին և արտաքին բարգաւաճման վերաբերեալ դիւանական նիւթերը»՝ որոնք Մխիթարայ Ձեռակերտիս մէջ պահուած են։ Յայտնի կը տեսնուի, որ ճիշդ այս վերջին պարագան ամենամեծ դժբախտութիւն կը թուի իրենց մօտ՝ այս ու այն պատճառներով, քանի որ – ինչպէս ինքն իսկ Հ. Ակինեան Վ. դիտել կու տայ – «*1773 *և* 1774 *տարիներուն Ս. Ղազարու վանքէն բաժանուող Հայրերուն չէ յաջողած ամէն բան վերցնել իրենց հետ....»* (էջ 524)։

*Ես բան մը միայն պիտի ըսեմ Մեծ. Հ. Ակինեանի ականջն ի վար, թէ այդ մասին ներողամիտ ըլլայ որ լռել կ'ուզենք, իր պատկանած Պատ. Միաբանութեան համբաւը պահպանելու և անոր ի վնաս առիթներ չստեղծելու համար....։*

*Յիշեալ Մեծ. Հայրը ի պաշտպանութիւն իր թեզին՝ յենուլ կը փորձէ իրենց տարեգիրներուն և իր նախնեաց աւանդութեան վրայ, ինչ որ — շատ դիւրին է հասկնալ — զոյգ գլխաւոր շարժիչներէն՝ Հ. Աղեքսանդր Պապիկեանէ և Հ. Մինաս Գասպարեանէ յղացուած պէտք է ըլլան, որոնք անշուշտ պիտի ջանային ոգւով չափ ծածկել կամ այլակերպել իրենց եպերելի դերը, նուիրականացնելու համար զայն հետագայ սերունդներու առջև։ Ուստի՝ ինչպէս մէջէն ելլել. — ձևը հնարուած էր այսպէս.*

*ա. Մխիթարայ մտքին մէջ Թրիեստ վանատուն բանալու ծրագիր մը դիտել և սոյն դերակատարները իբրև խղճամիտ գործադիրներ հոն փութացնել։ — Ասոր նկատմամբ պատասխանած էի արդէն,* (Հմմտ. Բզմ. 1926 Յուլիս, էջ 221-223), *թէ «նախ այդպիսի աւանդութիւն մը գոյութիւն պիտի ունենար բուն իսկ Հիմնադրիս Ձեռակերտին մէջ. մինչդեռ ո՛չ Մխիթարայ անթիւ նամակներուն, ո՛չ նոյն ժամանակի Մխիթարեան թղթակցութեան և ո՛չ Մայրավանքիս ժամանակագրութեան մէջ բառ մը կայ»։*

*բ. Մխիթարայ օրինաւոր Յաջորդը ըզՄելքոնեան Աբբահայր ծայրագոյն յանդըգնութեամբ մը ցայդվայր* (1750-1773) *Ս.*

---

1. Բզմ. 1926, էջ 191.

Աթոռէն չհաստատուած նկատել. Թէեւ գաղափարիս յղացողք զգային ի ներքուստ խղճի ուժգին բողոք՝ ճշմարտութեան դէմ ծառանալնուն. Բայց և այնպէս՝ ելքի ճամբայ մը հարկ էր. ուստի հոս ալ հնարքը գտնուած է. — իրենց ոստումը ներկայացնել՝ իբր ապօրէն և անվաւեր կացութենէ դէպի օրինաւորն ու վաւերականը դիմում մը, յառաջացում մը։

Սոյն երկու հիմնական հարցերուն նկատմամբ կը բաւականանամ չափաւոր տեսութեամբս, ու կը վերադառնամ այժմ միւս խնդրոյն՝ այսինքն Միխիթարեան տիտղոսին, որոյ նկատմամբ կը յուսամ այս անգամ ընդարձակ ծանօթութիւն մը տալու՝ ո՛չ միայն Մեծ. Հ. Ակինեան Վ.ի՝ այլ և իր համախոհ Մեծ. Միաբանակիցներուն։

Կը գրէ բանասէր Հայրը. «Մեծ. Հ. Տայեան ‚հիմնովին արմատախիլ՝ ընելու համար տողերս, կը պրպտէ Ս. Ղազարու Դիւանը և ի մէջ կը բերէ (Բզմ. 1926 էջ 158–160) 11 տեղիք, ուր Ս. Ղազարու Միաբաններէն ոմանք[1] իրենք զիրենք անուանած են իրենց թղթերու մէջ (1750-1773 շրջանէն) Մխիթարեան, նաև հաւաքական ձևի մէջ ‚Մխիթարեանք'» (Հանդ. Ամս. էջ 525)։

Բազմ.ի ընթերցողք ու բոլոր շահագրգռուողք կրնան բարեհաճութիւնն ունենալ անգամ մը ևս բանալու սոյն խնդրական էջը ամսաթերթիս մէջ. և ահա հոն պիտի հանդիպին վերոյիշեալ տեղիքէն անմիջապէս առաջ իմ բացայայտ ծանուցմանս՝ այս ձևով. «Զետեղենք հոս կարգ մը օրինակներ՝ մի միայն 1750 և 1751 տարիներու շրջանէն[2]». վերջինը լոկ (այն է 11րդը)՝ որ իբր օրինակ դրած եմ Եւրոպականներէն՝ կը պատկանի 1763 թուականին. զայս ալ յայտնապէս անդրադարձուցած եմ իր գծին վրայ։ Արդ, զարմանալի չէ՞ այդքան պայծառօրէն ցուցադրուած տեղիքս ու նշանակած թուականներս Մեծ. Հ. Ակինեանի կողմէ Հանդ. Ամսօրեայի ընթերցողներուն առջեւ խեղաթիւրուած դրուիլը, և այդպէս՝ ցուցմունքս ինքնին հեգնանքի ենթարկելը իր պատասխանին մէջ, իբր թէ 1750–1773 (= 23 տարուան շրջանին) Միխիթարեան տիտղոսը մի միայն գործածուած ըլլար ոմանց կողմանէ, կամ որ նոյնն է ըսել՝ 11 անգամ. որուն հետևանք կը բերէ՝ թէ «Ս. Ղազարու Հարք հազուադէպ անգամ շեղած են առաջին շրջանի սովորականներէն, [կ'ուզէ ըսել՝ ի կարգէ Ս. Անտոնի, Անտոնեան և նման կոչումներէն], որչափ ալ պահանջքն եղած է այս [այսինքն՝ Միխիթարեան յորջորջումը] մասնաւորներու սրտին» (էջ 528)։

Ո՛ւշ դնել, որ այսու հանդերձ Մեծ. Հ. Ներսէս իր յօղուածին սկիզբը կ'ըսէր. «Ինչո՞ւ կասկածիլ անկեղծ ճշմարտախնդրութեանս վրայ» (էջ 522)։

Որպէս զի մանրամասն գաղափար մը առնուի և մի անգամ ընդ միշտ պատմութիւն տայ՝ թէ 1750–1773 շրջանին՝ Ս. Ղազարու մէջ Միխիթարեան յորջորջուիլը Մեծ. Հ. Ակինեանի ի զուր քարոզածին պէս մի միայն ոմանց յատուկ եղած չէ, «մասնաւորներու» սրտին պահանջքը եղած չէ, այլ գրեթէ բոլոր Միաբաններուն, ստորև կը ներկայացնեմ այս անգամ ընդհանուր ցուցակ մը տարիներու կարգաւ, ուր պիտի տեսնուի որ Ս. Ղազարու Հարք թէ՛ իրենք զիրենք Միխիթարեան յորջորջած են և թէ այդպէս կոչուած են օտարներէ. Բայց այս անգամ՝ խրատուած՝ նախ «հզօր ապացոյց»ը կը ներկայացնեմ, քանի որ այսպէս կ'ախորժի Մեծ. Հայրը։

Ինչպէս կը տեսնեմ՝ Հ. Ակինեան Վ.ի ծանօթ են Կղեմէս ԺԳ.ի վճիռներէն մի միայն անոնք՝ որոնց մէջ յիշատակուած էին Միաբանեալք Հայոց Ս. Ղազարու և այլ նման անուններ. Ու ծանօթ չէ, զոր օրինակ, նոյն Քահանայապետի ուրիշ մէկ թուղթը (1762 Դեկտ. 7), որով կը շնորհէ Լիակատար Ներողութիւն Ս. Ղազարու տօնին առթիւ ամէն անոնց՝ որոնք կը յաճախեն կղզեկիս համանուն եկեղեցին, զոր և Ս. Հայ-

1. Ընդգծուած է Մեծ. Հ. Ակինեանէ։

2. Բազմ. 1926, էջ 158։

digitised by A.R.A.R.@

որ կը յատկացնէ «Monacorum Armenorum Mecchitaristarum Insulae S. Lazari»... կը ներկայացնեմ հոս նաև բնագրին պատկերը։




Իսկ հետագայ ցուցակը պատրաստած եմ Մայրավանքիս Դիւանի մէկ միայն նամակատուփերու հայերէն թուղթերէն, սկսեալ 1752էն մինչև 1773¹, որ է Վիեննական Հարց ծագման թուականը։

| Թուղթ ուղղեալ առ... և Մխիթարեան տիտղոսը | Ստորագրութիւն և Մխիթարեան տիտղոսը | Թուական | Տեղի |
|---|---|---|---|
| Ստեփաննոս (Աբբ.) Մխիթարեան | Մինաս Դանիէլեանց | 1752 Ապրիլ 24 | Եղիսաբեթուպոլիս |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Իգնատ. վրդ. Մխիթարեան *² | 1752 Ապրիլ 29 | Վիեննա |
| Հ. Վրթ. Ասկէրեան | Ստեփ. վրդ. Մելքոնեան Մխիթարեան | 1752 Մայիս 6 | Վենետիկ |
| Հ. Զաքարիա | Հ. Ներսէս Մխիթարեան | 1752 Մայիս 6 | » |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Զաքարիա վրդ. Մխիթարեան* | 1752 Մայիս 26 | » |
| » » | Հ. Յով. վրդ. Մխիթարեան տրապ.* | 1752 Յունիս 2 | » |
| » » | Հ. Գէորգ վրդ. Մխիթարեանց | 1752 Յունիս 21 | » |
| Թոմաճան Մահմուտ | Մկրտիչ վրդ. Մխիթարեան | 1752 Օգոստ. 1 | » |
| (Խոստմնագիր) | Հ. Գաբր. Կ. Պոլսեցի. [ի հաստատութիւն] Ստեփ. վրդ. Աբբահայր միաբանութեան հայոց միանձանց Մխիթարեանց | 1752 Օգոստ. 8 | » |
| Ստեփ. Աբբ.ի և Մխիթարեան վրդ.ի | Հ. Գէորգ վրդ. Մխիթարեան | 1752 Սեպ. 20 | Վիեննա |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց Մխիթ.* | 1756 Մայիս 17 | » |
| Տիրացու Աբրահամ | Նիկողայոս կրօնաւոր Մխիթարեան [Ստորագրութենէն անմիջապէս վերջ գրած. Դեռ աշակերտ է ինքը] | 1757 Յունուար 18 | Վենետիկ |
| Մելքոնեան Աբբ. | [Նամակի] մէջ «եկն աստ առ ի կողմանց (Նալեան) պատրիարքին և առէ ցիս. Ասացի ցաթոռակալ նորա, թէ ահա որպէս ասացի, առաքեցին Մխիթարեանքն զփիլիսոփայութիւնն (ստորագր.?)։ | 1757 Յունուար 20 | Պոլիս |
| Մելքոնեան Աբբ. | [Վերնագրին մէջ] «Տեառն Տեառն Հայր Ստեփաննոս Մխիթարեան Աբբայ Հայր կոչեցելոյ». [Նամակին մէջ] «Սուրբ Հայրս իմ Ամուճաս Հայր Ստեփաննոս, Մխիթարեան Աբբայ. (ստորագր. Աբրահամ?) | 1758 Փետր. 23 | Պոլիս? |
| Մելքոնեան Աբբ. | Աթանաս վրդ. և եպս. [Նամակին մէջ] «կատարումն կարեն առլ փափագանաց մերոց, այս է Մխիթարեան աշակերտք» | 1758 Մայիս 2 | Պոլիս |

1. 1750 և 1751 թուականներէ քաղուածներս տես Բազմ. 1926, Մայիս, էջ 159-160։

2. * Աստղանիշը կ'իմացնէ, թէ նոյն Հայրը սկսեալ այդ թուականէն իր ամէն նամակներուն ներքև միշտ Մխիթարեան կը ստորագրէ։

digitised by A.R.A.R.@

| Թուղթ ուղղեալ առ… և Մխիթարեան տիտղոսը | Ստորագրութիւն և Մխիթարեան տիտղոսը | Թուական | Տեղի |
|---|---|---|---|
| Մելքոնեան Աբբ. | Եղ. Արուէն Աւլիկեանց կրօնաւոր Մխիթարեան * [դեռ աշակերտ] | 1759 Դեկտ. 15 | Հռովմ |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Մկրտ. Անանեանց. [Նամակին մէջ] «սկսաւ պատրիարքն [քաղղէացւոց] մեծաւ արտմութեամբ յանդիմանել զնոսա և ջատագովել զմեր կրօնն. ասէ. ո՜ր անիծեալ է այն, որ բանայ զբերան ընդդէմ Մխիթարեանց, նոքա են երկրորդ լուսաւորիչ ազգին [կը գրէ Գասպար անուամբ մէկուն և անոր համախոհներուն մասին]. | 1765 Փետր. 8 | Հռովմ ? |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Սիմոն ի միաբանութենէ Մխիթարեան | 1765 Փետր. 28 | Եղիսաբեթուպոլիս |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Մեսրոպ վրդ. Մխիթարեան | 1765 Մարտ 19 | » » |
| Հ. Մկրտիչ Անանեանց | [Հ. Իգն.ի նամակէն՝ Պոլսոյ լատին Վիքարին խօսքերը առ Հ. Իգն. և Հ. Մեսր.] «Լաւարա՛ք Մխիթարեանք, այսօր գիր առի»։ | 1765 Մարտ 23 | Պոլիս |
| Մեծարգոյ և աստուածակարգ անտեսաց մերոց Մխիթարեան միաբանութեան | Հ. Մկրտիչ Անանեանց | 1765 Մայիս 4 | Հռովմ |
| | [Ընկալագիր]. «Ես Մարկոս Յովհաննիսեան Եղիսաբէթպօլսեցի.. առի ի Վեր. Հ. Մկրտիչ Վ.էն Մխիթարեանց..» | 1765 Յուլիս 27 | Հռովմ |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Մկրտ. Անանեանց. «Ստեփ. Մելքոնեան աբբայ միաբանութեան հայոց միանձանց Մխիթարեանց» | 1765 Օգոս. 3 | Հռովմ |
| Հ. Մկրտ. Անանեանց | Ստեփ. վրդ. Մելքոնեան Աբբայ միաբանութեան Մխիթարեանց | 1765 Օգոստ. 16 | Ս. Ղազար |
| Հ. Մկրտիչ Անանեանց | Ս[տեփ] Վ. Ա[բբայհայր] միաբ. Մխիթարեանց | 1765 Սեպտ. 7 | » » |
| Մելքոնեան Աբբ. | Հայր Սիմոն կրօնաւոր նուաստ ծառայ Մխիթարեան | 1765 Սեպտ. 14 | ? |
| Հ. Մկրտ. Անանեանց | Ս. Վ. Ա[բբայհայր] միան. Մխիթ. | 1765 Սեպտ. 14 | Ս. Ղազար |
| » » | » » » միաբ. Հ[այոց] Մխիթարեանց | 1765 Հոկտ. 5 | » » |
| » » | Ս. Վ. Ա[բբայհայր] միաբ. Հ[այոց] Մխիթարեանց | 1765 Հոկտ. 18 | » » |
| Հ. Իգնատ. վրդ. | Ստեփ. վրդ. Մելքոնեան Աբբայ միաբանութեան Մխիթարեանց | 1765 Նոյեմբ. 12 | » » |
| Տ. Յովհաննէս վրդ. | Ստեփ. վրդ. Մելքոնեան Աբբայ միաբանութեան Մխիթարեանց | 1765 Նոյեմբ. ԻԲ. | » » |
| Հ. Մկրտիչ [Ան.] | Ստեփ. վրդ. Մելքոնեան Աբբայ միաբանութեան Մխիթարեանց | 1765 Նոյեմբ. 29 | » » |
| Մելքոնեան Աբբ. | Հայր Սիմոն կրօնաւոր ի միաբանութենէ Մխիթարեանց | 1766 Յունուար 20 | Եղիսաբեթուպոլիս |
| Լուսիա Խաթուն | [Ստեփ վրդ. Մելքոնեան] «աբբայհայր միանձանց հայոց Մխիթարեանց բնակելոց ի Վենէտիկ ի վանս..» [կոնդակէն] | 1766 Մարտ 30 | Ս. Ղազար |
| Մելքոնեան Աբբ. | Խաչիկ ո. հ. Նիկօլի Դօլօզանեան. «աբբայ հայր Հայոց կրօնաւորաց Վենէտիկոյ ի վանքըն սրբոյն Ղազարու՝ ի միաբանութենէ Մխիթարուեան | 1766 | Եղիսաբեթուպոլիս |
| «Ի ձեռս վեր. Տեառն Հ. Իգն. Վ.ին Մխիթարեան.» | Մելքոնեան Աբբ. | 1766 Ապրիլ | Ս. Ղազար |
| «Ի ձեռս ամենապատիւ և գերյարգելի Ստեփ. Վ.ի մեծի Աբբայի Մխիթարեան Վանաց..» | Տէր Պետրոս Մուրատճայեան. «..զի զայնքանս և զայնպիսիս պարծանս և զվարկանս ունիմ ցարդ զանեղաչէն Մխիթարեանց վանաց | 1766 Ապրիլ 5 | Հռովմ |
| Գ. Ստեփաննոս | Ստեփ. վրդ. մելքոնեան աբբայ միաբանութեան Մխիթարեանց | 1766 Ապրիլ 5 | Ս. Ղազար |

digitised by A.R.A.R.@

| Թուղթ ուղղեալ առ… և Մխիթարեան տիտղոսը | Ստորագրութիւն և Մխիթարեան տիտղոսը | Թուական | Տեղի |
|---|---|---|---|
| Հ. Մկրտ. Ան. | Հ. Թադէոս վրդ. Մխիթարեան սէտէֆճիօղլու | 1766 Ապրիլ 15 | ? |
| | [ընկալագիր] «Ես Հայր Միքայէլ Զամչեանց Մխիթարեան.» | 1766 Ապրիլ 28 | Վենետիկ |
| «Ստեփաննոսի. արժանաւոր Աբբայի միաբանի Մխիթարեան» | Յովհաննէս արքիման միսսիօնար առաքելական | 1766 Ապրիլ 29 | Նէօփլանթ |
| Հ. Մկրտ. Ան. | Անտոն արեղայ Մուրատճայեան. «զովարանէ զաստուածախումբ միաբանութիւն Մխիթարեանց վանաց» | 1766 Յուլիս 2 | |
| «Ի ձեռս Վեր. Տեառն Հ. Մկրտ. Վ.ին Մխիթարեան» | Ստեփաննոս վրդ. Աբբայ միաբանութեան Մխիթ. | 1766 Յուլիս 12 | Ս. Ղազար |
| «Ի ձեռս Գերյարգոյ Տեառն Ստեփ.ի Մելքոնեանց արժանաւոր Աբբայի միաբանութեան Մխիթարեանց.» | Եղ. Արսէն Ալլիկեան կրօնաւոր Մխիթարեան | 1766 Յուլիս 19 | Հռովմ |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Անանիա վրդ. Մխիթարեան. «ընկալայ և զոսկի կանոն Հ. Դաւթի Պօղոսեան կրօնաւորի Մխիթարեան | 1766 Օգոս. 15 | Կ. Պոլիս ? |
| Մելքոնեան Աբբ. | Աթանաս եպս. Փոխանորդ Առաքելական [ի Պոլիս]. «Իբր զի իւրով մակացութեամբ կամիցէր.. զմիաբանութիւն Մխիթարեան» | 1766 Նոյեմ. 1 | Կ. Պոլիս |
| Մելքոնեան Աբբ. | Տէր Պետրոս Մուրատչայեան. «Մխիթարիմ զմխիթարութիւն մեծ անսեալ զարժանապատիւ Հարս Մխիթարեանս» | 1766 Դեկտ. 20 | Կ. Պոլիս |
| | [դամբանին վրայ]՝ Սէտէֆճի Գրիգորի որդւոյ Հ. Թադէոս վրդպ.ի Մխիթարեան... (Ժմնկգր. Ուխտիս Հտ. Գ. 392) | 1767 | Օրթագիւղ |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Բարսեղ Նաստուրեան վարդապետ Մխիթարեան * | 1767 Հոկտ. 21 | Եղիսաբեթուպոլիս |
| Ծնողս և եղբարս | Յարութիւն Մազաքեան նորընծայ Մխիթարեան | 1768 Յունուար 18 | Վենետիկ |
| Հ. Զաքարիա Ա[լեքսանեան] | Յարութիւն Մազաքեան Նորընծայ Մխիթարեան | 1768 Յունուար 19 | Վենետիկ |
| «Ի ձեռն աստուածաշնորհ և գս. ակրօն անտօնեան կրօնաւորից, Մխիթարեան աշակերտից Հայր Ներսէսին Համպարեան, վանաց վանականի..» | Մկրտիչ Յակոբեան Էրզրումցի | 1768 Մարտ 11 | Կեռլա |
| Մելքոնեան Աբբ. | Հայր Բարսեղ վրդ. Մխիթարեան ի կարգէ Անտոնեան | 1768 Սեպտ. 15 | Եղիսաբեթուպոլիս |
| «Ի ձեռս Գերամեծար Տեառն Տեառն Ստեփ. Վ.ի Աբբայ Հօր Մխիթարեանց ի վանս Ս. Ղազար» | Հ. Անանիա | 1768 Հոկտ. 12 | Պոլիս |
| «Ի ձեռս Գերամեծար.... Ստեփ. Վ.ի և Աբբայ Հայր միաբանից Մխիթարեանց» | Հ. Մեսր. Վ. Մխիթ. | 1768 Հոկտ. 17 | ? |
| Հարս և Եղբարս Ուխտիս | Հ. Նիկողայոս Բուզայեան կրօնաւոր Մխիթարեան | 1768 Նոյ. 21 | ? |
| Հ. Բարսեղ | Հ. Ղուկաս Սիմոնեան կրօնաւոր Մխիթարեան | 1768 Նոյ. 4 | Վենետիկ |
| «Ի ձեռս Վեր. Տեառն Հ. Զաքարիա Վ.ի Մխիթարեան» | Մելքոնեան Աբբահայր | 1768 Դեկտ. 6 | Վենետիկ |
| Մելքոնեան Աբբ. | Հայր Վարդան վրդ. Ագոնց Մխիթ. | 1768 Դեկտ. 7 | [Մաճառաստան] |
| Մելքոնեան Աբբ. | Հայր Անտոն Իւչզարտաշեան վարդապետ Մխիթարեան | 1769 Յուլիս 22 | ? |
| Մելքոնեան Աբբ. | Հ. Յովհաննէս Վ. Այվազեան և Մխիթարեան | 1772 Յուլիս 29 | ? |

digitised by A.R.A.R.@

*Ցարգելի Հ. Ակինեան այս փաստացի ցանկը տեսնելէ ետքը յուսամ պիտի ընդունի այս անգամ «բանասիրական հողի վրայ» ալ, թէ Ս. Ղազարու մէջ Մխիթարայ որդիները* ԱՌՀԱՍԱՐԱԿ (*ո՛չ թէ ոմանք*)՝ 1773 *էն՝ այսինքն Բաժանումէն շա՛տ առաջ՝ ո՛չ միայն գործածած են Մխիթարեան տիտղոսը և նոյնպէս ճանչցուած օտարներէ՝ այլ նաև – իրենց (Վիեննական Հարց) տեսակէտին ալ հետևելով – ինքնին վաւերացուած և պաշտօնականութիւն մ՚առած է Ընդհանուր Եկեղեցւոյ Գերագոյն Հեղինակութենէն՝ զէթ* 1762 *թուականին*, (*չմոռնա՛լ. միշտ յառաջ քան զ*1773)։

*Նոյն իսկ քննելով վայրկեան մը Վիեննական Մեծարգոյ Հարց մէկ տեսակէտը, թէ* (1773-*ին*) *Տրեստեան Հայրերը ընտրած են Մխիթարեան անունը իրենց պաշտօնական յորջորջանք՝ դիտել պիտի ուզէի տալ, թէ արդեօք այդ չունէ՞ր իր ներքև ծածկուած խորհուրդ մ՚ալ՝ արարքնին քողարկելու և կամ ըստ կարելւոյն միամիտ պահելու ժողովուրդը նոյն դժուարին օրերուն՝ ուր անշուշտ շատ զգուշութիւն կը պահանջուէր. ինչպէս նաև անդամակցութեան հրաւիրելու և նուիրատուութիւններ ապահովելու իրենց հաստուածին։*

*Նոյն իսկ այն պարագան — թէ Մարիա Թերեզա ընդ առաջ գացած է Թրիեստեան Հարց աղերսագրին* (1775 *Մայիս* 30) *և տուեր է հրովարտակ մը՝ որուն ընթացքին զիրենք նոյն Հարց կողմանէ գործածուած* Mechitarista *տիտղոսով կը կոչէ –, Հ. Ակինեան Վ.է հրամցուած գաղափարն ու տեսութիւնը հաստատելու չափ գոհացուցիչ չէ, որովհետև՝ անկէ* 23 *տարի առաջ* (*հմմտ. Երկու Նամակներ Հ. Իգն. Խաչատուրեան առ Մելգոնեան Աբրահայր. Բզմ.* 1926 *Յուլիս էջ* 221–223) *նոյն կայսրուհւոյն ծանօթ էր Մեծ Սեբաստացւոյն գործը որ գոյութիւն ունէր Վիեննայի մէջ*[1], *երբ արդէն Մխիթարեան տիտղոսն ալ միւս կողմանէ գործածութեան մէջ էր, և ինքն Հ. Իգնատիոս իր նամակներուն տակ ընդհանրապէս ինքզինքը կը ստորագրէր Մխիթարեան, ինչպէս իր նամակները ցոյց կու տան։ Ուստի անհիմն չէ կարծել, որ ի Վիեննա այդպիսի առաքելական գործունէութեան մը միջոց կայսրուհւոյն ծանօթ ըլլար նաև Մխիթարեան անունը, քանի որ սա այլևս սկսեր էր մուտ գտնել Հիմնադրին զաւակաց սրտերուն մէջ ու գրչի տակ։ Արդ,* 1775 *թուականին Թրիեստեան Հարց ըրածն ուրիշ բան չէր՝ եթէ ոչ՝ Մխիթարեան տիտղոսին տակ պաշտօնապէս (իրենց բառով) պահուըտած՝ օգտագործել Մարիա Թերեզայի արդէն իսկ տրամադիր վիճակը, պատրաստ հողը։*

*Մեծ. Հ. Ակինեան Վ. հաստատելու համար՝ թէ իրենք մինչ պաշտօնապէս Մխիթարեան կոչուիլ սկսեր են՝ անդին Ս. Ղազարու Հարք ալ Անտոնեան կամ ի կարգէ Ս. Հօրն Անտոնի... կը կոչուին եղեր՝ ընտրանօք վկայութեան կը բերէ ցայնվայր հրատարակած վաւերագիրներէս անոնք՝ որ կը պարունակեն նոյն կամ նման յիշատակութիւններ. կը դիմէ նաև* Schiarimenti-*ի և այլ մէկ երկու գրքերու, բայց կը զգուշանայ չհանդիպիլ գոնէ նշանակած* 11 *վկայութիւններուս՝ ուր դիմացը կ՚ելլէ Մխիթարեան կոչումը։ Արդէն հանդիպելու հարկին ալ խի՛ստ կը վարուի ու կը նկատէ զայն «Միաբանութեան պաշտօնական անուան [այսինքն «ի*

1. *Այն աստիճանի ծանօթ՝ որ տեղւոյն Հայութիւնը ապահովելու համար Մխիթարայ հարազատ զաւակաց առաքելութիւնը Վիեննայի մէջ՝ իր խնդրագիրն առ Ս. Ժողով կը դրկէ «ի ձեռն ազնուա մեծի իշխանի Կայսեր, որ «երթեալ է ի Հռովմ և է ծանօթ և բարեկամ յոյժ Հայոց «աստ [ի Վիեննա] եղելոց և բարեկամ կարդինալին «Ալպանի, և խոստացեալ է անձամբ կատարել զխնդիր «սոցա»* (Հ. Իգն. Խաչատր. առ Մելգ. Աբր. 1751 Սեպտ. 4. Վիեննա. *տես.* Ժմնկգր. Ուխտիս, *էջ* 54)։ *Զարմանք չէ այս, քանի որ դիմող հայերէն ոմանք բարեբախտ գտնուած են նոյն ինքն Կայսեր մասնաւոր հոգածութիւնն ու մտերիմ բարեացակամութիւնը վայելելու, երբ մինչև անգամ անոնց «Երբեմն ասէ... (կայսրն), «թէ ո՞չ ունիք դուք զխնդիր ինչ, զի կատարեցից» (Անդ.)։ Դեռ աւելին կայ. Հ. Իգնատիոս Վ. կը գրէ առ Մելգոնեան* (1752 Փետր. 8). *«Պատահեցաւ մեզ ի մե-«րայ պարսպի քաղաքիս կայսր երկու արամբք յան-«ծանօթս եղեալ ի զբօսանս և սկսաւ հարցաքննութեամբ «խօսել ընդ մեզ իբրև զկէս ժամ. և ոչ ծանեայ զնա.»* (*Անդ. էջ* 79)։ — *Ասոնք աննշան պարագաներ չեն՝ ցոյց տալու համար ըստ բաւականին ընդարձակ ծանօթութիւնները՝ զորս ունէր Կայսերական Արքունիքը Մեծ Սեբաստացւոյ անուան ու գործին շուրջ* 1773-*ի դատուածներէն դեռ շատ տարիներ առաջ։*

digitised by A.R.A.R.@

կարգէ Սրբոյն Անտոնի»ի..] կից «իբրև աւելադիր յորջորջանք միայն», կամ՝ «կարծես թէ աւելադրութեամբ զետեղուած» (էջ 528, 529)։

Բայց հոս ես հարցնելիք ունիմ. – Եթէ «..detti Mechitaristi»(=Մխիթարեան կոչեցեալք) բացատրութիւնը այդպէս զուրկ կը դատուի Բանասէր Հօր ակնոցին տակ իր ճշգրիտ նշանակութենէն (էջ 529), հետաքրքիր էի գիտնալ թէ ինքը ի՞նչպէս կը հասկնայ կամ պիտի հասկնար ու մեկնէր արդեօք՝ երբ իւր աչքին դիմաց կանգնէր անթիւ թուղթերու ներքև դրոշմուած այս համբուրելի անունն ու տիտղոսը «Մխիթար Աբբայհայր ԿՈՉԵՑԵԱԼ»։ Ի՞նչպէս կը հասկնայ նաև «Պաւղոս... ԿՈՉԵՑԵԱԼ Առաքեալ» (Առ Հռոմ. Գլ. Ա. 1). «Պաւղոս ԿՈՉԵՑԵԱԼ Առաքեալ (Առ Կոր. Գ. Ա. 1) բացատրութիւնները. Աբբա Հ. չէ՞ Մխիթար. Առաք. չէ՞ Պօղոս։

Մեծ. Հ. Ակինեան շուտով կ'ընդհատէ իր բերած վկայութիւնները, որոնց շարքը քիչ մ'ալ ես ուզելով շարունակել՝ կը քաղեմ իր իսկ գրութենէն։ Մարիա Թերեզայի հրովարտակին մէջ միթէ երկիցս գրուած չէ՞ Վիեննական Ուխտին համար «Congregazione Mechitarista *dell'Ordine di Sant'Antonio Abbate* (էջ 529), – Թրիեստեան հրատարակութեան մը ճակատը՝ «Փառք Մարիամու ի Հարց Մխիթարեան Միաբանութեան Թրիեստու, որ ի կարգէ Ս. Անտոնի Աբբայի (էջ 530), – Միաբանութեան կնիքը՝ «Կնիք Մխիթարեան Միաբանութեան ի կարգէ Սրբոյն Անտոնի Աբբայի» (էջ 530), — 1785-ի Թրիեստեան Հարց Սահմանադրութիւնը՝ «ի Հարց Մխիթարեանց, որ ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի (էջ 531)։

Յիշեալ Հայրը նաև իբր ապացոյց կը բերէ վեննետկեան մէկ քանի տպագիր մատեաններու ճակատէն՝ «աշակերտ Մխիթարայ Վարդապետի մեծի Աբբայի» (1751, 1759, 1772, 1779) կամ «յաշակերտաց Մխիթարայ Աբբայի Բարունապետին Սեբաստացւոյ Մեծի Աբբայի» (1775) բացատրութիւնները (էջ 528)։ Ասոնք՝ ըստ Հ. Ակինեան Վ.ի՝ մեր խնդրական հարցին աննպաստ և թերակատար ձևեր են եղեր առ մեզ. բայց երբ նոյնե՞րն կը հանդիպի՝ իրենց (Վիեննական) տպագրութիւններէն ոմանց ճակատը՝ այն ատեն պանծանօք կ'ըսէ. «Կը սիրեն պարծիլ [Վիեննական Հարք] նաև իբրև աշակերտ.. Հօր Մխիթարայ.. Աբբայի մեծի» (էջ 530). զարմանալի չէ՞ այս ձև պատճառաբանութիւնը։ Կ'երևի Հ. Ակինեան Վ. կ'անգիտանայ, որ ուրիշ Եւր. Միաբանութիւններ ալ, զոր օրինակ, Բեննեդիկտեան Կարգին պատկանող զանազան Միաբանութիւններ իրենք զիրենք կ'անուանեն կամ կը ստորագրեն O. S. B. (= ի Կարգէ Ս. Բեննեդիկտոսի) Cistercense. — O. S. B. Olivetano. — O. S. B. Vallombrosano և այլն և այլն. երբեմն ալ լոկ երկրորդը. ի՞նչ յանցանք կը գործեն Ս. Ղազարու նախնի Հարք՝ երբ իրենք ալ նոյնպէս «կը սիրեն պարծիլ»՝ մերթ ի Կարգէ Ս. Անտոնի և մերթ միասին Մխիթարեան ալ նշանակելով. միթէ մէկը միւսին արգե՞լք եղած է Եւրոպացւոց քով. Մայրավանքիս վաւերաթուղթերը կը խօսին նաև, որ Ս. Ղազարու Ուխտը՝ տարիներու շրջանին՝ զոր օր. մինչև 1773, ցանցառօրէն յորջորջուած է Անտոնեանէ և Մխիթարեանէ զատ՝ նաև Որդեգրեալ Միաբանութիւն, Աբբայ որդեգրաց Կուսի, Աբբայ որդեգրաց կրօնի, Աբբա որդեգրաց Կուսի կրօնի (1767), Որդեգիր Կուսին, Վարդապետ Աբբայեան (1769, 1770)։ Իսկ երէկուան և այսօրուան իտալացիք կ'անուանեն զմեզ Mechitaristi, Padri Mechitaristi, Padri Armeni di S. Lazzaro, Monaci Armeni են. ի՞նչ արգելք կ'ըլլան ասոնք Մխիթարեան կոչուելնուս։ — Ինչո՞ւ հեռուները երթանք, Յարգելի Հ. Ակինեան, միթէ Դուք և ստորագրողս կը փոփոխուի՞նք՝ երբ փոխադարձ կը կոչենք զիրար Հ. Ն. Ակինեան, Հ. Ակինեան, Հ. Տայեան, Հ. Ղևոնդ են..։

Հուսկ՝ հզօրագոյն փաստ ըստ Մեծ. Հ. Ակինեանի՝ Թրիեստեան Հարց վերոյիշեալ պաշտօնական մեծ կնիքն է. ԿՆԻՔ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ԿԱՐԳԷ ՍՐԲՈՅՆ ԱՆՏՈՆԻ ԱԲԲԱՅԻ, որուն համար կ'ըսէ թէ

digitised by A.R.A.R.@

Միաբանութեան սկզբնաւորութեան [այսինքն 1773-թուականին] կը պատկանի»։ կայ նաև փոքրը, որ է կն. Մխ. ՄԻԱԲ. Ի ԹՐԵՍՏ։ «Մեծ կնիքը.. խորհիլ կու տայ [Հ. Ակինեան Վ.ի] թէ ինքնայատուկ էր այն իւր վերտառութեամբ Տրիեստեան Միաբանութեան, հիմնովին տարբեր Ս. Ղազարու ‚Միանձանց Հայոց' կնիքէն» (էջ 531)։

Բայց Հ. Ակինեան Վ. ասոր դիմաց պիտի տեսնէ հոս Ս. Ղազարու Ընդհ. Աբբանօր կնիքը, որ և շատ աւելի «խորհիլ կու տայ»՝ թէ շինուած է գէթ 1771-1772 ՀՐՐջանէն առաջ։ Ասոր ի հաստատութիւն ունինք, զոր օր, Մայրավանքիս վանական աշակերտաց Ընդհանուր Ցանկը, ուր 1771-ին առաջին անգամ (իմա 1773-էն երկու տարի առաջ) մուտ կը գտնէ ու կը շարունակուի իբրև պաշտօնական ձև Մխիթարեան տիտղոսը՝ մէն մի Նորընծայի արձանագրութեան մէջ այսպէս. «Ես Հ. Ստեփաննոս վրդ. վերակացու Նորընծայից ձեռամբ իմով գրեցի և հաստատական կնքով միանձանց Մխիթարեանց կնքեցի»։



Այսպէս՝ ամէն տեսակէտով ալ ահա «կը մնայ իրողութիւն թէ առաջին անգամ (1773-ին) Տրեստեան Հայրերը» ՉԷ՛ ՈՐ «ընտրեցին Մխիթարեան անուն իրենց պաշտօնական յորջորջմանը», այլ Մեծին Մխիթարայ Ջեռակերտին բուն որդիքը։

Հետևաբար կը մնայ այժմ Մեծ. Հ. Ակինեան Վ.ի փակել բանավէճը, իւր ճըշմարտասէր հոգւոյն ապացոյց, դրոշմելով Հանդէս Ամսօրեայ Պատ. Թերթին մէջ՝ որ Վիեննակեցիքս ենք առաջին անգամ պաշտօնապէս Մխիթարեան կոչուողներն ու ճանչցուածները։ Հ. Գ. ՏԱՅԵԱՆ

# ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Ամէն անգամ որ մեր մատենագրութիւնը կը թղթատեմ, կարեկցութիւն կը զգամ այն փոքր, կէս ծանօթ հեղինակներուն վրայ, որ մեր գրական պատմութեան մէջ այնքան աննշմար մնացած են և գրեթէ մոռցուած. անոնք ինծի կը յիշեցնեն գերեզմանոցներու պարզունակ գերեզմանները, հազիւ փոքր խաչքարով մը կամ գունաւոր խիճերով կամ ղալար ցած թուփերու շրջապատով մը որոշուած և անջատուած միւսներէն, պարզապէս առանձին գոյութիւն մ'ունենալնին ցոյց տալու համար։ Եւ սակայն անոնց մէջ հանգչողներն ալ անցեալին մէջ սիրտ մ'ունեցած են որ տրոփած է. ունեցած են միտք մը որ խորհրդածած է շունչին և իրենց գոյութեան վրայ և այսպէս ստեղծած կեանք մը, ուր ո՛վ գիտէ ինչպիսի ուրախութեան ծաղիկներ ալ կրցած են ընձիւղած ըլլալ։ Եթէ կարենանք այդ ծաղիկներուն երջանկաբոյր խունկը հիմայ մենք ալ զգալ, իրենց համար նոր փառք մը ստեղծած կ'ըլլանք։ Հեղինակներու փառքը յայտնի է աւելի մեծ ալ է, վասն զի իրենց կեանքէն զատ մեզի թողուցած են գործ մըն ալ, որ որքան թոյլ և տմոյն, սակայն միշտ մէջը բան մը կը բաբախէ իրենց եսէն։

Գրիգոր Արշարունի այնքան անծանօթ անձ մըն ալ չէ, գոնէ չէ եղած իր ողջութեան ատեն։ Ժամանակակից պատմիչները զինքը չեն յիշատակեր. այնու հանդերձ եկեղեցական կեանքին և պատմութեան մէջ պէտք է մեծ դեր մը կատարած ըլլայ, հետևցնելով ասիկա այն հատուկտոր տեղեկութիւններէն և գովեստի խօսքերէն՝ զոր հետագայ պատմագիրները իր վրայօք ուրուագրեր են։ Ղևոնդ Երէց, Յովհաննէս կաթողիկոս զինքը բնաւ չեն յիշեր, իբր թէ անծանօթ մէկը եղած ըլլար. Յովհան կաթողիկոսին անծանօթ է նաև Մանազկերտի ժողովն ալ, ապա թէ ոչ կը յիշէր Գրիգորիսն ալ։ Առջի անգամ զինքը յիշատակող կը հանդիպանայ Ստեփաննոս Ա-

digitised by A.R.A.R.@